

## ԲԵԹԱՆԵՀԵՄԻ Ս. ՄԱՆՈՒԿՅ

Փառք ի բարձունս Աստուծոյ  
և յերկիր խաղաղութիւն,  
ի մարդիկ նանութիւն:

ԱԽԵՏԱՐԱՆ ՀԱՏ ՂՈԽԱ., թ 14



հմղեհեմի ս. Մանկան Ծնունդն  
է տոնում այսօր Հայաստան-  
յաց Առաքելական Եկեղեցին:  
Հավատացյալ հայ ժողովուրդն

առանձին վսեմ գուրգուրանքով է կապված  
այս մեծ ու սրբազն տոնի հետ, որը գարերի  
խորքից գալով, զարդարված վեհ խորհրդա-  
վորությամբ ու արտաքր փառահեղությամբ,  
միշտ էլ տոնվել է մեծ շուքով:

Հիրավի մեծ է այս տոնն, իր ներքին տղե-  
շունչ բովանդակությամբ: Ծնվում է նա, որը  
մեծանալով ու արրունքի համակելով սկսում է  
քարոզել նոր մտքեր ու գաղափարներ, որոնք  
միանգամայն խորթ ու հակառակ էին այն  
ժամանակված մարդկության դավանած սկզբ-  
րութներին ու գաղափարներին: Հեթանոս  
աշխարհը բիրոտ ու կոպիտ էր, մարդատյաց ու  
ազերիշ և բաժանված լինելով տիրողների ու  
ստրուկների, նա ամեն բարիք տրամադրում  
էր առաջիններին, իսկ երկրորդներին զրկում  
ամեն ինչից, օրինականացնելով ստրկու-  
թյունը՝ տիրողների կողմից սահմանված  
օրենքներով: Մարդկության մեծամասնու-  
թյունը դարեր շարունակ հեծում էր հեթանոս  
աշխարհի բննատիրական կարգերում, ուր  
տիրողները վայելում էին աշխարհի բոլոր  
բարիքները և զեխության մեջ թաղված լինե-  
լով, անընդունակ էին ճանաչելու աշխարհի  
շարն ու բարին, ճշմարիտն ու անարդարը:  
Հեթանոս աշխարհը կառուցված էր բիրոտ տ-  
ժի ու բռնության վրա, այնտեղ թագավորում  
էր կոպիտ ուժի երկրպագությունը:

Այն ժամանակված ասմենաքաղաքակիրթա

համարված հոռմայեցիք անգամ մարդատյաց  
էին, այս բառի կատարյալ իմաստով: Բացի  
այն, որ իրենց սեփական ստրուկներին մարդ  
չէին համարում, աշխարհի մյուս բոլոր ժո-  
ղովրդներին ու ազգերին էլ բարբարոս էին  
անվանում, այսպիսով, իր թե, շեշտելով  
իրենց գերազանցությունը նրանց նկատ-  
մամբ, Տարփած լինելով ամբողջ աշխարհին  
տիրելու մոլի ցանկությամբ, հոռմայեցիք  
աշխարհավեր պատերազմներ էին մղում ա-  
մենուրեք, մանավանդ Մերձավոր Արևելքում,  
ինչպես և Հայաստանում, ու քարուքանդ ա-  
նում, ըրկիզում այդ երկրների հարուստ քա-  
ղաքներն ու շեն գյուղերը, կոտորում, ցիր ու  
ցան անում բնակիլներին, մահ սփռում ա-  
մենուրեք, ամայացնելով արդավանդ ու բա-  
րերեր անդ ու անդաստանները:

Եկածա այս բռնության ու ավերածության  
աշխարհում ծնվում է նա, Փրկիչը, կուս և  
լուսն, սիրո քարոզիչը, որի վարդապետու-  
թյունը հետագայում ցնցում է ախտերով ա-  
պականված ողջ հեթանոս աշխարհը հիմքից  
ի վեր:

Նրա ծնունդն էլ որպիսի հուզիշ եղելության  
հետ է կապված: Նա ծնվում է ոչ թե զորավոր  
արքունիքում, պերճ պալատում կամ հարուստ  
մեծատան շքեղազարդ պալարանքում, այլ  
Բեթղեհեմի անշուր այրում, անմեղ գառների  
ու ոչխարների պատսպարանում, բնության  
պարզ զավակների՝ հովիվների շրջապատում.  
այսուել էլ խանձարուրում փաթաթվերով մը-  
սուր է դրվում: Այսում ծնված լինելով նա  
հետագայում անողոք պատերազմ է հայտա-  
րարում բոլոր տեսակի բռնակալ տիրողների

ու կողոստիչ մեծատունների դեմ, որոնց զավակները ծնվելուց շրջապատված են լինում շքեղությամբ, բայց ձեռք բերված որդիշների արյուն-քրտինքով: Գառների մսուրից և նենելով նա սիրո ու գթության ձեռք է մեկնում բոլոր տառապյալներին, իրավագութիւններին և թրշվաներին: Ոչխարների այլում ծնվելու այս մեծ ու զմայլեցուցիչ խորհրդավորությունը Նրա հետագա աստվածային քարոզության խոշոր հաջողություններից մեկը զարձավ: Սիրո և իաղաղության վարդապետը, չեռ հարող ծնվել բռնակալ տիրողների ու կեղերիչ հարուստների միջավայրում: Նա ծնվեց բռնավորների կողմից արհամարհվածների, հարստահարվածների միջավայրում:

Նրա ծնունդն այնպիսի մեծ դեպք էր, որ նույնիսկ երկնքի հրեշտակները վերից ուղղումում ու փառարանում էին ասելով: «Փառք ի բարձունք Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հանուրին», այսինքն նորածին ու Մանուկն այս սկզբունքները պիտի բարողի: Եվ իրոք, որքան սրտասուչ է այս փառարանությունը: Նախ պետք է փառք տանը Բարձրյալին, որ մեզ ստեղծել է ու կյանք պարզեցել, ամեն բարիքով մեզ ապահովել, ստեղծել է իր պատկերի նման, լինել բարի, առաքինի, գթած ու ողորմած: Ապա երլիք, աշխարհի վրա խաղաղություն պիտի տիրի և ոչ թե պատերազմ, ամեր, թալան, կողոպուտ, խաղաղությունը մարդկային հանգիստ կյանքի առաջին պայմանն է: Խաղաղությունն է, որ մարդկանց սրտերը լցնում է բերկրանքով, երջանկությամբ: Խաղաղության պայմաններում են ձեռք բերվում մարդկության նյութական ու հոգևոր կյանքի բոլոր բարիքները: Խաղաղությունն է, որ մարդկանց հնարավորությունն է տալիս հետզհետե առաջապիմել, հոգևոր ու կուտարական կյանքով ևս ապրել, քանի որ ըստ ավետարանի «ոչ միայն հացի կեցցէ մարդ»: Խաղաղությունը մերժում է ամեն մի պատերազմ, ավեր, սրածություն, արնածարավ արշավանք: Եվ վերջապես «ի մարդիկ հանուրին», այսինքն մարդկանց մեջ սերը պետք է թագավորի, սերը պետք է իշխի ամենուրիք, սիրոց պետք է բլան մարդկանց բոլոր ձեռնարկությունները: Ապտուծություն պահպան է մարդու, խաղաղության

մեջ գործող մարդը, սիրո զգացումով պետք է համակված լինի, նրանից ամենուրիք սեր պետք է բուրի և նրա բոլոր գործողությունները սիրով պետք է զարդարված լինեն: Որտեղ սեր կա, այնտեղ չկա ատելություն, նախանձ, կողոպուտ, զրկանք, առհասարակ որևէ շարիթ: Միրով տողորված մարդն ինչպես կարող է սորուկ ունենալու, ուրիշի ստացվածքը համբաւակել, զրկել կամ որևէ անիրավություն անել: Միրով սրահից միշտ բարություն, արդարությունն կրխի:

Ահա այն վեհ ճանապարհը, որով պետք է ընթանար թեթղեհեմի ու Մանուկը, միաժամանակ կոչում ունենալով ավետարանել աղքատներին, պաշտպան կանգնել բոյոր տրնանկներին, հալածվածներին ու ճնշվածներին: Մ Մանուկը մեծանալով, հոգով ու մարմբնով լցվելով ու կատարելագործվելով, երեսուն տարեկան հասակում մկրտվում է Հորդանան գետում Հովհաննես Մկրտչի ձեռքով և այդ օրվանից իրեւ Փրկիչ, Հիսուս Քրիստոս սկսում է ժողովրդի մեջ քարոզել հրեշտակների ավետարանած մկրտնքները՝ հավատ առ Բարձրյալն, խաղաղություն ամբողջ աշխարհում և սեր, համերաշխություն մարդկանց մեջ: Բոլոր ավետարանների մեջ ամենուրիք կարելի է հանդիպել հատրնտիր գոհարների, որոնք Փրկչի բերանով քարոզվել են ժողովրդին, ու իր անմիջական աշակերտներին: «Միրեսցի զմիմեանս, որպէս և սիրեցի զձեզ», «Մեծ ևս քան զայս սէր ոչ ոք ունի, երէ զանձն իւր զիցէ ի վերայ բարեկամաց իւրոց»:

Ինչպես նման չէ այս ամենն այն բոլորին, ինչ որ տիրապետող էր այն ժամանակա հեթանոս աշխարհում: Եվ այս պատճառով քարոզիչ Փրկիչն իր գործունեության ամբողջ ընթացքում շատ նեղություններ է քաշում: Իսկ երբ սկսում է խարազանել այն ժամանակվա կեղծավոր զպիրներին ու փարիսեցիներին, որոնք ամեն բան անում էին ի ցուց մարդկան, արտաքուստ երկում էին արդար, իսկ ներքուստ լի էին կեղծավորությամբ և անիրավությամբ, հալածանքն ավելի է սաստկանում նրա գեմ՝ հանգելով զավադրության: Նա բաղադրական իշխանության ձեռքն է մատն-

լում, որպես մահապարտ, ու այսպիսով նրա երկրավոր կյանքին, իր քարոզած անմահ պատափարների համար, Գողգոթայի կառափարանում վերջ է տրվում:

Բայց նրա ցանած սերմերը ծլում ու աճում են, նրա աշակերտները իրենց Մեծ Վարդապետի պատգամները շարունակում են քարոզել ժողովրդին: Մրանք էլ իրենց հերթին, իրենց Տիրոջ նման, հալածվում են, տանջվում ու նահատակվում. բայց նահատակ առաքյաներին փոխարինում են նրանց աշակերտները, որոնք շարունակում են մեծ եռանգոյ սկսված գործը ու այսպես շարունակվում է մինչև որ քրիստոնեովյան վեհ գաղափարները հաղթանակ են տանում ու տիրապետու դառնում:

Հայ ժողովուրդը պատմական անցյալում առաջիններից մեկն էր, որ փառվեց քրիստոնեովյանը, խորապես ըմբռնելով՝ նրա

քարոզած գաղափարների վեհությունը: Հայ ժողովուրդը որդեգրեց այդ նոր վարդապետությունը, ինքնուրույնաբար մշակեց ու զարգացրեց այն և ստեղծեց իր ինքնուրույն Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, որը ո՛չ մի կախում չունի աշխարհի ուրիշ ուվելի հզոր որևէ եկեղեցուց. դրանով իսկ նա իր հոգևոր անկախությունը, իր մարդենի լեզուն, իր մտավոր ու հոգեկան կյանքը, իր ինքնությունը հաստատ պահեց և հասցրեց մինչև մեր օրերը:

Խաղաղության ծարավ հայ ժողովուրդն այսօր իր բնիկ հայրենիքում ըղձալի խաղաղություն է վայելում: Որտեղ սեր կա, այնտեղ է խաղաղություն կա: Թո՞ղ խաղաղությունն ու սերը թագավորեն մեզ մոտ ամենուրեք եղանով իսկ արժանավայել կերպով մեծարենք այս մեծ տոնը, խաղաղության և սիրո քարոզի, թեթղեհեմի ո. Մանկան Ծնունդը:

ՃԵՄԱՐԱՆՑԻ

